

Վայացավ քաղաքացիների 2015 թվականի մայիս ամսվա ընդունելությունը

18.05.2015

2015 թվականի մայիսի 15-ին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի մոտ կայացավ քաղաքացիների հերթական ընդունելությունը:

Ընդունելության համար ցուցակագրվել էր 71 քաղաքացի, ընդունելության էին եկել 77-ը:

Ֆինանսական օժանդակության խնդրանքով դիմել էին 73 քաղաքացիներ, որոնց խնդրանքը բավարարվեց: Իսկ 4-ը դիմել էին այլ հարցերով՝ աշխատանքի տեղավորման հարցով՝ 1, նպաստի հարցով՝ 1, բնակարանի հատկացման հարցով՝ 1 և ոռոգման ջրի խողովակաշարի հետ կապված խնդիրներով՝ 1 քաղաքացի: Այլ հարցերով դիմած քաղաքացիների կողմից բարձրացված հարցերին պատասխանելու նապատակով մարզպետը հանձնարարություն տվեց մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին՝ հաշվառել վերը նշված հարցերը, ուսումնասիրել, օրենքով սահմանված կարգով և նախատեսված ժամկետներում պատասխանել ընդունելության եկած քաղաքացիներին: